ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2017 թվականի **թիվ 7** քաղ. Բիշքեկ

**Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2017-2018 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների մասին**

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2017-2018 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները:

2. Առաջարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին մակրոտնտեսական քաղաքականություն վարելիս հաշվի առնել սույն Որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2017-2018 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ անցկացնել մակրոտնտեսական քաղաքականության ոլորտում Եվրասիական տնտեսական

միության անդամ պետությունների կողմից իրականացվող միջոցների վերլուծություն եւ գնահատել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2017-2018 թվականների մակրոտնտեսական քաղաքականության՝ սույն Որոշմամբ հաստատված հիմնական կողմնորոշիչներին այդպիսի միջոցների համապատասխանությունը:

## Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

| Հայաստանի Հանրապետությունից՝ | Բելառուսի Հանրապետությունից՝ | Ղազախստանի Հանրապետությունից՝ | Ղրղզստանի Հանրապետությունից՝ | Ռուսաստանի Դաշնությունից՝ |
|---|---|---|---|---|

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի 2017 թվականի
ապրիլի 14-ի թիվ 7 որոշմամբ

# ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐ

## Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2017-2018 թվականների մակրոտնտեսական քաղաքականության

Սույն փաստաթուղթը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին (այսուհետ՝ Պայմանագիր) համապատասխան եւ ուղղված է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 28 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության տնտեսական զարգացման հիմնական ուղղություններով սահմանված նպատակների իրագործմանը:

2016 թվականին Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ) տնտեսական զարգացումը պայմանավորված էր ստեղծված արտաքին պայմաններին դրանց ադապտացման եւ առաջին հերթին արտահանվող հիմնական ապրանքների գների նվազեցման եւ համաշխարհային տնտեսությունում ու հիմնական առեւտրային գործընկեր երկրներում տնտեսական իրավիճակի վատթարացման հետ կապված մի շարք արտաքին ցնցումների ներգործության բացասական հետեւանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:

Անդամ պետությունների տնտեսությունների զարգացման վրա ազդող լրացուցիչ բացասական գործոն է դարձել մի շարք երկրների եւ միջազգային

կազմակերպությունների կողմից Ռուսաստանի Դաշնության նկատմամբ արտաքին ֆինանսավորմանը, ապրանքների եւ տեխնոլոգիաների, ինչպես նաեւ համատեղ ծրագրերի իրականացման հետ կապված սահմանափակող միջոցների (պատժամիջոցների) գործողության երկարաձգումը:

Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի գնահատմամբ 2016 թվականին համաշխարհային տնտեսության աճի տեմպերը դանդաղել են եւ ավելի ցածր են եղել, քան ակնկալվում էր: Տնտեսական աճի տեմպերի դանդաղումը կամ նվազումը այս կամ այն չափով բնորոշ է եղել աշխարհի բոլոր խոշոր տնտեսություններին, այդ թվում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներին, Եվրոպական միության երկրներին, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը, Լատինական Ամերիկայի երկրներին, ընդ որում, աճի դանդաղումը առավել արտահայտված է եղել զարգացող խոշոր երկրներում եւ հումքային ապրանքներ արտահանող երկրներում:

Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի կանխատեսումային գնահատականներին համապատասխան՝ 2017 թվականին ենթադրվում է համաշխարհային տնտեսության աճի տեմպերի արագացում՝ հիմնականում զարգացող երկրներում գործարար ակտիվության վերականգման հաշվին: Համաշխարհային տնտեսության աճի նվազման հիմնական ռիսկերն են քաղաքական եւ տնտեսական անորոշությունը, անկայունությունը ֆինանսական շուկաներում, գործարար ակտիվության ցածր մակարդակը զարգացած երկրներում, զարգացող երկրներում ներդրումների ներհոսքի՝ արտադրողականության աճը զսպող դանդաղումը, ինչպես նաեւ համաշխարհային առեւտրի պայմանների վատթարացումը եւ ծավալների նվազումը:

Համաշխարհային տնտեսական շարունակական աճով պայմանավորված՝ նավթի պահանջարկի աստիճանական աճը եւ նավթ արտադրող երկրների կողմից նավթի արդյունահանման կրճատումը կնպաստեն պահանջարկի եւ առաջարկի հավասարակշռությանը: Ակնկալվում է նաեւ իրավիճակի կայունացում եւ դրական միտումների աճ հումքային այլ շուկաներում:

Այս պայմաններում անդամ պետությունների կողմից իրականացվում էր տնտեսական քաղաքականություն, որն ուղղված էր դրանց տնտեսությունների վրա արտաքին տնտեսական ոչ բարենպաստ իրադրության ազդեցության մեղմացմանը՝ մակրոտնտեսական կայունության ձեռքբերման եւ տնտեսության մի շարք ճյուղերին ու հատվածներին աջակցություն ցուցաբերելու համար անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկմամբ:

Անդամ պետությունների կառավարությունների եւ ազգային (կենտրոնական) բանկերի կողմից ձեռնարկած միջոցառումների արդյունքում հաջողվեց կայունացնել մակրոտնտեսական իրավիճակը անդամ պետություններում: Նվազեց ազգային արժույթների փոխարժեքների անկայունության մակարդակը: 2016 թվականի ընթացքում ռուսական ռուբլու փոխարժեքը դրսեւորել է աճի կայուն միտում՝ տարվա արդյունքներով ամրապնդվելով ԱՄՆ դոլարի նկատմամբ 20,1 տոկոսով: 2016 թվականին ամրապնդվել են նաեւ ղրղզական սոմը եւ ղազախական տենգեն՝ համապատասխանաբար 8,8 եւ 1,8 տոկոսով: 2015 թվականի համեմատությամբ Ռուսաստանի Դաշնությունում եւ Ղազախստանի Հանրապետությունում էապես նվազել են գնաճի տեմպերը, գնաճի աննշան դանդաղեցում է նկատվել նաեւ Բելառուսի Հանրապետությունում:

Տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշների՝ Պայմանագրի 63-րդ հոդվածով սահմանված քանակական արժեքները գերազանցած անդամ պետություններում մակրոտնտեսական իրավիճակը բարելավելու համար Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից նախապատրաստվել են դրա կայունացմանն ուղղված առաջարկություններ:

Միեւնույն ժամանակ արտաքին տնտեսական բարդ իրադրության ֆոնին 2016 թվականին բոլոր անդամ պետությունները շարունակեցին գերազանցել տնտեսական զարգացման կայունությունը որոշող ցուցանիշներից առնվազն մեկը: Գնաճի հաշվարկային մակարդակը (դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ) Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում

եւ Ռուսաստանի Դաշնությունում պակաս զգալի է գերազանցվել, քան 2015 թվականին, եւ կազմել է համապատասխանաբար 6,7 տոկոսային կետ, 4,6 տոկոսային կետ եւ 1,5 տոկոսային կետ:

Հաշվի առնելով մասնավոր ներդրումների ցածր մակարդակը՝ անդամ պետությունների տնտեսություններին աջակցություն տրամադրվում էր գլխավորապես պետական ծախսերի ավելացման հաշվին, ինչը որոշ անդամ պետություններում բյուջեի եկամուտների նվազեցման ֆոնին նպաստեց 2016 թվականին Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի պակասուրդի առաջացմանը եւ բոլոր անդամ պետություններում պարտքային բեռի ավելացմանը:

Հայաստանի Հանրապետությունում շարունակում է պահպանվել Պայմանագրով սահմանված՝ պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի պակասուրդի մակարդակի գերազանցումը: Տվյալ ցուցանիշը գերազանցված է նաեւ Ղրղզստանի Հանրապետությունում: Պետական կառավարման հատվածի պարտքի սահմանված մակարդակը շարունակում է գերազանցված մնալ Ղրղզստանի Հանրապետությունում, իսկ Հայաստանի Հանրապետությունում այն կարող է հասնել Պայմանագրով սահմանված սահմանային քանակական արժեքին:

Մակրոտնտեսական կայունության ապահովումն անհրաժեշտ պայման է տնտեսական ակտիվության բարձրացման համար, այդ իսկ պատճառով անդամ պետությունները հետագայում եւս պետք է ձեռնարկեն ազգային եւ ինտեգրացիոն միջոցներ՝ ուղղված մակրոտնտեսական իրավիճակի բարելավմանը:

Ռուսաստանի Դաշնությունում եւ Բելառուսի Հանրապետությունում մակրոտնտեսական իրավիճակի կայունացման ֆոնին զգալիորեն դանդաղել են համախառն ներքին արդյունքի նվազեցման տեմպերը, նկատվում են արդյունաբերական եւ գյուղատնտեսական արտադրության աճի միտումներ, ինչը դրականորեն է անդրադառնում ամբողջ Միության տնտեսական զարգացման վրա:

2016 թվականին Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում նկատվում էր համախառն ներքին արդյունքի աճ: Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ակտիվության աշխուժացում է նկատվել արդյունաբերական հատվածում եւ ծառայությունների ոլորտում, աճել է արտաքին եւ փոխադարձ առեւտրի ծավալը: Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում տնտեսական ակտիվության աճի առավել բարձր տեմպեր գրանցվել են շինարարական եւ ագրոարդյունաբերական հատվածներում: Սակայն անդամ պետությունների տնտեսությունների աճի տեմպերը եւ ընդհանրապես Միության տնտեսական զարգացումը ցածր են մնացել պոտենցիալ մակարդակից:

Անդամ պետություններում տնտեսական աճի բարձր տեմպերի բացակայության վրա առանցքային ազդեցություն են գործում սպառողական եւ ներդրումային պահանջարկի ցածր մակարդակը, ինչպես նաեւ անդամ պետությունների ապրանքների արտաքին պահանջարկի նվազումը: Վերջին տարիների ընթացքում անդամ պետությունների ազգային արժույթների արդյունավետ փոխարժեքների նվազումը հանգեցրեց եկամուտների՝ ծառայությունների եւ մասնավոր սպառման ոլորտներից արտաքին առեւտրի ապրանքներ արտադրող հատվածների օգտին վերաբաշխմանը: Այս կապակցությամբ՝ անդամ պետություններում կազմակերպությունների ֆինանսական գործունեության արդյունքներով գրանցվել է կորպորատիվ հատվածի եկամուտի զգալի աճ՝ 2015 թվականի համեմատությամբ: Ընդ որում, անդամ պետությունների մեծ մասում հիմնական կապիտալում ներդրումների աճի տեմպերը շարունակում են նվազել: Անդամ պետությունները պետք է վարեն ներդրումային քաղաքականություն՝ ուղղված ֆինանսավորման ներքին աղբյուրների ակտիվացմանը, առկա խնայողությունների ներգրավմանը, ինչպես նաեւ ներդրումային կլիմայի եւ գործարար միջավայրի բարելավմանը:

2016 թվականին նախորդ տարվա համեմատ արտահանման ծավալները Միության տարածքում ընդհանուր առմամբ նվազել են: Դրա հիմնական պատճառը դարձավ միջանկյալ՝ առաջին հերթին էներգետիկ ապրանքների արտահանման

արժեքային ծավալի կրճատումը: Միեւնույն ժամանակ աճեց սպառողական ապրանքների արտահանումը, սակայն անդամ պետությունների արտահանման ընդհանուր ծավալում դրանց մասնաբաժինը շարունակում է ցածր մնալ: Այս պայմաններում անդամ պետություններում արտադրվող ոչ հումքային ապրանքների արտահանումը հումքային ռեսուրսների վաճառքից դրանց տնտեսությունների կախվածության աստիճանական նվազման եւ արտահանվող ապրանքների մրցունակության բարձրացման հետ միասին դառնում է անդամ պետությունների տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից մեկը:

Այս կապակցությամբ, մեծ նշանակություն կունենա Միության տարածքում ստեղծվող ավելացված արժեքի ավելացումը, այդ թվում՝ Միության ինտեգրացիոն ներուժի իրագործման միջոցով: Անդամ պետությունների ձեռնարկությունների՝ ավելացված արժեքի միջազգային շղթաներում ներկառուցումը լրացուցիչ հնարավորություններ կստեղծի անդամ պետությունների տնտեսությունների արդյունավետ փոխգործակցության զարգացման համար:

Այսպիսով, կարճաժամկետ եւ միջնաժամկետ ժամանակահատվածում անդամ պետությունների համար կարեւորագույն խնդիր է դառնում արդյունավետ տնտեսական զարգացման համար պայմանների ստեղծումը եւ տնտեսական կայուն աճին անցումը՝ հետեւյալ ուղղություններով միջոցների իրականացման եղանակով:

Մակրոտնտեսական իրավիճակի բարելավում, այդ թվում հետեւյալ միջոցներով՝

տնտեսական զարգացման կայունությունը որոշող ցուցանիշների՝ Պայմանագրի 63-րդ հոդվածով սահմանված քանակական արժեքների պահպանում,

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ տնտեսական զարգացման կայունությունը որոշող ցուցանիշների քանակական արժեքները պահպանելուն ուղղված առաջարկությունների մշակում եւ հաշվի առնում (դրանց գերազանցման դեպքում),

անդամ պետությունների՝ գնաճի թիրախավորման ռեժիմին անցնելու աշխատանքների շարունակում,

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների գնաճի մակարդակի (սպառողական գների ինդեքսի) միջնաժամկետ կողմնորոշչի սահմանման կարգի համաձայնեցում,

անդամ պետությունների ռեզիդենտների փոխադարձ հաշվարկներում անդամ պետությունների ազգային արժույթների օգտագործման ընդլայնման ապահովում,

ազգային մակարդակում անդամ պետությունների կողմից վարվող դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականության համակարգում:

Անդամ պետությունների տնտեսությունների կորպորատիվ հատվածի խթանում՝ հիմնական կապիտալի մեջ ներդրումների ծավալների աճի նպատակով, այդ թվում՝ հետեւյալ միջոցներով՝

տնտեսության մեջ կառուցվածքային վերափոխումներ անցկացնելու՝ համաշխարհային լավագույն փորձի եւ անդամ պետությունների փորձի կիրառում,

ներդրողների համար հարկային բեռի ձեւավորման կանխատեսելիության ապահովում, տնտեսության գերակա ճյուղերի եւ հատվածների ու ներդրումային ծրագրերի համար լրացուցիչ հարկային խթանների ստեղծում,

ներդրումային գրավչությունը բարձրացնելու եւ միջազգային վարկանիշներում անդամ պետությունների դիրքերը բարելավելու նպատակով ներդրողների համար վարչական ընթացակարգերի պարզեցում եւ վարչական խոչընդոտների նվազեցում,

անդամ պետություններում մրցակցային միջավայրի եւ մրցակցային շուկաների զարգացում,

պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառման ակտիվացում եւ մասնավոր կապիտալի՝ ներդրումային ծրագրերի իրականացմանը հասանելիության հնարավորությունների ընդլայնում,

ներդրումների վերադարձի եւ ներդրողի ռիսկերի ծածկման համար լրացուցիչ երաշխիքներ ստեղծող ներդրումների երաշխավորման մեխանիզմների կիրառում,

երկարաժամկետ ֆինանսավորման ներգրավում թույլատրող գործիքների լրակազմի ընդլայնում,

զարգացման ազգային եւ տարածաշրջանային ինստիտուտների, այդ թվում՝ Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի եւ Եվրասիական զարգացման բանկի, ֆինանսական հնարավորությունների օգտագործման ակտիվացում:

Միության տարածքում ստեղծվող ավելացված արժեքի ավելացում, այդ թվում՝ հետեւյալ միջոցներով՝

ինտեգրացիոն ներուժ ունեցող՝ տնտեսության ոլորտներում անդամ պետությունների համատեղ համագործակցային ծրագրերի նախապատրաստում,

ավելացված արժեքի միջազգային շղթաների՝ անդամ պետությունների մասնակցությամբ ստեղծում եւ զարգացում,

արտաքին եւ ներքին շուկաներում մրցունակ արտադրանք ստեղծելու նպատակով արդյունաբերական, ագրոարդյունաբերական եւ էներգետիկ քաղաքականության ոլորտում անդամ պետությունների համագործակցության արդյունավետ ձեւերի զարգացում,

ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժի համար խոչընդոտների աստիճանական վերացում եւ բացառումների ու սահմանափակումների աստիճանական նվազեցում:

Ոչ հումքային ապրանքների արտահանման զարգացում, այդ թվում՝ հետեւյալ միջոցներով՝

երրորդ կողմերի հետ համաշխարհային շուկայում Միության շահերի առաջխաղացմանն ուղղված առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացում,

բազմակողմ առեւտրային համակարգում Միության մասնակցության արդյունավետության բարձրացում,

արտահանման աջակցության մեխանիզմների օգտագործում, այդ թվում՝ վարկավորումը, ապահովագրությունն ու վերաապահովագրությունը, ինչպես նաեւ տեղեկատվական եւ խորհրդատվական աջակցությունը,

Միության տրանսպորտային-լոգիստիկ ենթակառուցվածքի զարգացում,

բեռների առաքումն արագացնելու եւ տրանսպորտային ծառայությունների որակը բարելավելու նպատակով տարանցիկ ու խառը փոխադրումների զարգացում,

անդամ պետությունների փոխադարձ առեւտրի ակտիվացում,

Միությունում մաքսային կարգավորման կատարելագործում եւ մաքսային գործառնությունների կատարման կարգի պարզեցում,

արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար մաքսային ընթացակարգերի պարզեցում եւ արագացում՝ առանց կորցնելու Միության մաքսային սահմանին մաքսային հսկողության եւ հսկողության այլ ձեւերի որակը:

Նշված միջոցների համալիրն իրականացնելը կնպաստի անդամ պետությունների տնտեսությունների՝ ստեղծված արտաքին պայմաններին ադապտացման գործընթացի ավարտին, բացասական տնտեսական երեւույթների հետեւանքների հաղթահարմանը, անդամ պետությունների տնտեսությունների վերականգնմանը եւ տնտեսական կայուն աճին անցմանը, այդ թվում՝ Միության ինտեգրացիոն ներուժի իրագործման եւ ինտեգրացիոն հնարավորությունների օգտագործման հաշվին:

---